Մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Սահմանադրության օրվա առթիվ

05.07.2022

Արմավիրի մարզի հարգելի՛ բնակիչներ, սիրելի՛ հայրենակիցներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Սահմանադրության օրվա առթիվ:

Անկախության վերականգնումից հետո Սահմանադրության ընդունումը կարևորագույն քայլ էր պետականության վերակերտման ճանապարհին, որն ամրագրեց Հայաստանի՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության բնույթը:

Օրինականության խորհրդանիշ հանդիսացող Մայր օրենքում ներառված են Հայոց պետականության հիմնարար սկզբունքները, համազգային նպատակները, մարդու և քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները: Եվ մեզանից յուրաքանչյուրի պարտքն է առաջնորդվել դրանցով՝ հանրային կյանքի բոլոր բնագավառներում կայուն առաջընթաց և ժողովրդական արժեքների գերակայություն ապահովելու համար:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս պետական այս նշանակալի տոնի առթիվ՝ ցանկանալով, որ ՀՀ սահմանադրությունն անշեղորեն ծառայի քաղաքակիրթ ապրելակերպի ու զարգացման նպատակներին: